

ներ լոցա Վասակ զաւրավարն Յայոց. 2 Իկն¹ սպանաներ, եւ զզաւրսն զկէսն կոտորեր, եւ զկէսն առաջի իւրեանց փախստական առնէին: 5 Այն անգամ եւս ոչ կարէին ի բուռն արկանել զՄերուծանն²:

ԳԼՈՒԽ ԼԶ.

1 Յաղագս Սուրենայ պարսկի, որ յետ 2 ըկայն եւս եկն ի պատերազմն. եւ նա ի բուռն անկեալ Վասակայ, հանդերձ իւրովք զաւրաւքն սատակեցաւ:

2 Եւ եղև յետ մահուն 2 ըկայ, Սուրեն պարսիկ խաղաց ի թագաւորեն Պարսից Շապիոյ. վաթսուն բիւրու եկն եհաս, տալ պատերազմ ընդ թագաւորին Յայոց Արշակայ, եւ առաջնորդ ուներ զՄերուծանն: 3 Ապա ժողովեաց զամենայն զաւրս նախարարացն Վասակ սպարապետն Յայոց. ելաներ ի գիշերի անկաներ ի ներքս ի դակիշն ի հետիոտս, սուսեր ի ձեռն տասն հազարաւ ընտիր ընտիր արամբք: 4 Առ հասարակ կոտորէին հարկանէին եւ սատակէին զզաւրսն Պարսից. եւ ձերբակալ առնէին զՍուրեն պարսիկ, եւ ածէին զնա առ արքայն Արշակ: 5 Ապա հրաման տայր քարակոշկոճ առնել զնա: 6 Բայց Մերուծանն ապրեր փախստեայ:

ԳԼՈՒԽ ԼԷ.

1 Յաղագս Յրեւշողումայ, որ առաքեցաւ յարքայեն Պարսից ի վերայ Յայոց իննսուն բիւրու. եւ այն անգամ եւս նշան յաղթութեան Յայոց կանկներ:

2 Եւ Յրեւշողումն արձակեր ի պատերազմ ի վերայ աշխարհին Յայոց: 3 2 ի եւ սա իսկ ի նմին յազգէ թագաւորին Յայոց ազգական էր, այլ բանիւ Շապիոյ արքայի գայր հասաներ հանդերձ զաւրաւք իննսուն բիւրուն, տալ պատերազմ ընդ հայաստանեայսն: 4 Ապա կարգեր կազմեր պատրաստեր Վասակ զաւրավարն Յայոց զամենայն զգունդս զաւրացն, եւ դիմեաց ի վերայ լոցա մարտիւ պատերազմաւ: 5 Փախստականս տանէին զնոսա, արկեալ առաջի իւրեանց, եւ Յրեւշողումն եւ Մերուծանն փախչէին:

ԳԼՈՒԽ ԼԸ.

1 Յաղագս Աղանայոզայն, որ չորեքհարեր բիւրաւ գայր հասաներ ի թագաւորեն Պարսից՝ տալ պատերազմ ընդ արքային Յայոց, եթէ զհա՛րդ նեղեալ պարտեցաւ ի ձեռն Վասակայ:

2 Իսկ Աղանայոզանն, որ Պահլաւն էր ի տոհմեն Արշակունեաց, որ նա խրոխտացեալ առաջի Շապիոյ թագաւորին Պարսից, եւ գնայր գայր հասաներ ի սահմանս Յայոց: 3 Ապա այս վաղագոյն ազդ լիներ թագաւորին Յայոց

1 *Յօրինակի միում*՝ զնուիրակապետն

2 *Օրինակ մի յաւելու՝ չար*